## Ե

# ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 88(97). ԱՂՋԻԿ-ՏՂԻ ԳԵՐԵԶՄԱՆ*

Խին ժամանակ մե խատ աղջիկ ու մե խատ էլ տղա ղլենi էգ աղջիկ իտրուստ գլնի, աղեն՝ քյասիր։ Աղջիկ շատ սիրուն գլի։ Ըտոնք կսիրեն իրուր։ Մե հուրիշ աղա էլ կսիրա էաա աղջկան։ էգ աղեք թունգ մուշտարի գլեն։ Ըտոնցից մեկը՝ թարղի գլնի, մեկելն էլ լավ գերընգի քյաշողւ

Աղջկա խեր կտենա, որ էտա տղեք շատ ղայլա կտանեն, կեթան-գյուքյան, մե օր կասա.— Թե իմ աղջկան գյուլեք, մե պայման կդնեմ. էդա գերընգի քյաշողը՝ թե չուր սաքախտան իմ ջոջ արտ գերընգա, կո աղջիկ կտամ քե, իսկ դու էլ, այ թարղի, ընձի իմար մե ձեռք շոր պաի կարես, ըմա՛լ կարես, որ ոչ ասեղ, ոչ էլ մկրատ բանեցուս. կո, ոն որ շուտ պրծավ, ընդորն էլ կտամ իմ աղջիկ։

Թաղին դես կղանվի, գեն կղանվի, իլլաջ չգտնա, կեթա մե ջաղու պառավու կուշա, կպատմա հուր ղլխու էկած ու. կասա.—Պառա՛վ, ընծի չտան աղջիկ։

— Քյո ղործ չէ, դու ղյնա ղինջ քնի։

Պառավ գլնի կաենա, որ գերնգի քյաշող աղեն կո՛ էնա հա՛ պաի պրծնի։

Կասա.—Քյոռ աղա՛, սևամեռիկ տղա՛, քյո տուն քանդվեր ա, Թարղին շուտուց ա պրծե, աղջիկն էլ տարե, հրնչի՞ կղտրկվես։

Տղեն էս որ գլսի՝ աեղրատեղ կմնա։ Աղջիկն էլ, որ կսիրեր գերընդչուն, մաենա տղին մեռուկ, հինքնել կըթմի։ էգ էրկուսին էլ մե տեղ կթաղեն ու չուրի հեսօր կասեն՝ էսի էն քյասպներու գերեզմանն ա՝ աղջիկ-տղա գերեզմանը։ էս խաչքյարն էլ, կս աղջկա խերն ա քյաշե հուր աղջկա վրեն։

### 89(98). ԱՂՋԻԿ-ՏՂԻ ԽԱՉ-ԳԵՐԵԶՄԱՆ

Մե գեղ մե քյասիր տղա գլնի, կսիրա մե հարուստի աղջկա։ Խեր չուզա, որ աղջիկ էղ չլութ-չփլաղ աղին առնի։ Շատ միջոցներ ձեռ կառնի որ աղջկան ալից կարա, բայց իլլաճ չի ըլում, ըասնք ուժեղ կսիրեն հիրար։

Խեր ասըմ ա.—Սպասի՛, ըննից պայման դընեմ տղի հառեջ, որ հնար չունենա կատարելու, հինք ձեռք կքյաշա։

Էտա մենծ արտ ա ունենում, աղին կկանչա, կաստ.—Թե էդ արտ մե օրում քաղիր, աղջիկ քյոնն ա ու քյոնն. թե չէ՝ ղլոխդ կարեմ։

Տղեն հիրա սիրուց թե կառնի, մե քյանի գերանդի արել կաա, առավոտ արեծագին կսկսա քաղ, մինչև արևու մտնել պտի վերջացու։ Քաղ կէնա էնքան, մինչև արևու մտնելուն իրեք մարղարոյ կմնա, որ պրծնի, արտն էլ իրեք մարղարոյ կմնա, որ վերջացնի։

Խաբար կատնեն հարուստին, թե.—Տղեն իրեք մարդարոյ ա մնում, որ վերջացնի, տրևուն էլ՝ իրեք մարդարոյ, որ մանի։

Էս հարուստ էլ՛ չի իմանում, թե ինչ անի, մե պառվու փող ա տալիս, ասում ա.

— Գնա՛, տղին խաբար տար, թե աղջիկ հույս չունենալով թե կպրծնես, հիրան սպանեց, խփեց։

Պառավ կգա աղին կասա։ Տղեն արտը կվերջացնու, մե գերանդի էլ սուր կպախա, որ վերջացու. գերանդին կանկա ու հիրան կթալա լտու վրեն։

Խաբար կեթա աղջկան կհասի, թե տղեն արտը չվերջացուց, արև մեր մտավ, էնի չկարցավ,

* Ավանդությունների այս շարքը վերաբերվում է Կամոյի Սանասարին գանվող խաչքար գերեզմանին (Ծ. Կ.)։

քաշարեց վերջացնել, հույսը կտրեց, հիրան զանեց, սպանեց։

Աղջիկ կասա.—Վա՜յ վավիլեր, էլ իմ սաղ մնալն ինչի՞ս ա։

Հիրան կսպանա։

Ու էդ էրկուսի գերեզման էղ անտեր արտի գլխին կփորեն ու կթաղեն։

Ջուր մկա մենք հուխտ կէթանք, մոմ կվառենք, խունկ կծխենք, էդ անրախաների դերեզմանի վրա։ Էս վերջերս էլ գյուղի ջահելներից մեկը մե խաչքար քաշեց էդ գերեզմանին. ամեն կիրակմտին կեթանք էղ նահատակ ջահելներու գերեզմանին։

## 90(99). ԱՂՋԻԿ-ՏՂԻ ԳԵՐԵԶՄԱՆ

Բայաղետի կուշտ մե գերեզման կա. մեկ աղջիկ կծոի հայու տղի վրեն, որ կծոի հայու տղի վրեն, աղջկա խեր էնտեղ մե արտ կա, իրեք հեկտար տեղ ա, կըսա.—Տղեն որ դնաց էդ իրեք հեկաար արան միանգամից մի օր քաղեց, տվեց ընձի, նոր իմ աղջիկ կիտամ էդ տղին։

Էս աղեն, աղջկա սիրութըյան խամար, կառնի գերընդին, կերթա, էս արտ դուղա հնձել։ Էնպես գ՛նձա էդ աեդ, համարա մացեր ա կես հեկաար տեղ։

Էն կողմից ղուքան, կըսեն.—Քու աուն ակոլի քեզի, գու եկեր ես դլոխդ կախեր ես էդ արա գ՛նձես, էդ աղջիկ հուղին աարան հուրիշներ։

Տղեն կշիտկի, խրտ շիտկելուն՝ տղի մեջք կկոտրի։

Դու մի՛ րսե՝ գալողն սուա ա ասեր ա, տղեն խափեր ա։ Տղեն կմեռնի։

Աղջկան գուքան խարար կրերեն, թե.—Քու աուն սուքվի, գու խլղի աղեն ճամփեր ես քո խոր քաղ կէնե, արդեն մեջք կոարե, հանե գրած է րրիջկի վրեն, կբերեն։

Աղջիկ կծկծու էն էլ էն տեղ կպաառի։ Բերեն էդ էրսկին կխորեն։

Կսա՝ փուշ ա րուսե էրկսի մեջաեդ, յանի էն հանդեն էլ չխասած հիրար մուրաղի։

## 91(100). ԱՐԱՄՈՒ ՍԱՐ (ԱՐՄԱՍԱՐ)

Արամու խումբ եռեսունինը խոքի է եղեր, մեկ լե հինք քյառսուն։

Էգիկ հիրան զինվորներով կիդա փաշի հերգիր, ղանում ա, կոաորում ա։ Փաշեն լե արտվլենի կիաա, որ րռնեն, սպանեն Արտմուն։

Արամ լե հիրտն ղորքերով քառսուն ֆուրգուն ցորեն կքյաղա, թվանքներ լե մեջ կթաղա. խեր կգանի կասա,—Հելեք փախեք, փաշեն օր լսա՛լ, հմնուն սրի կքյաշա։

Ջուր էտոնք կեթին, փաշեն լցվավ Արամու աուն, Արամ քաշվե սարեր։

Փաշեն կկանչա քրոջ, կասա.—Օտերս իմ լվա։

Գոհարիկ էր էնոր անուն, կլվա։

Փաշեն կասա.—Արի իմ կուշտ, խոսենք։

Գոհարիկ կասա.—Դուս հրլնեմ, գամ։

Դուս հլելու րաշտեն՝ կփտխի սարեր, կեթա Մասսաց սարերի նման սարի գլոխ։

Խարար տտնք խորն ու փաշին։

Փաշեն կասա.—Բե աղջիկդ իմ կնիկ գառնա էսօր, ընձի էսօր կնիկ ա ղեսաք։

Խեր կասա.—Աղջիկ չկա։

Փաշեն լե կկաաղի, մլեր կղանա, խոր հաշկեր կխանա, էնի էնտեխ կմեռնի։ Իրեք խալպար ղորք կօղարկա Արամի հետևից՝ Արամու սարի չորս րոլոր պաաել։ Ջուլում էկավ վրա Արամու, գուման կապեց անխիղճ սարուն։

Աա՜ռ, սարի վրա մե ղուշ գնես, կերևա։ Արամ հեռատես դրեց, քուրոջ տեսավ, գացին, քուր բերին, հեղան քառսունմեկ խոքի։ Քառսունմեկ խոքով սարի գլխից լավ կոաորեցին, համա փաշի ղորք շաա էր, կոտորեց հելավ սար։ Արամ հրմնին խրկեց, մենակ հինք մնաց։ Փաշեն կրռնա Արամուն, սարի դլխուն կկախա։ Էդ օրվանից սար կասեն Արսմաստր։

## 92(101). ՁՈԼԱՔԱՐ

Կսեն, մե վախա էս մեր Գոդչեն էնքան ձուն ա էկե, օր ամրոդջ էրկու իրեք աարի մացե ձան տակ, ու րնակչութըյունն էլ սախպված թողե հեռացե։ Որոշ ժամտնակ հնցնելուց հեաո մարդիկ իրենց երկրի կարոան ղգալու՛, հիրանց ջահելներից կողարկեն, կըսեն.—Գացե՛ք, տեսեք ձունն հալե, թե՞ չէ։ Երիաասարդներ ձիանքներ խեծած ղուքան, կխասեն մինչե Ձոլաքար, կաեսնեն օր էլի նույն ձունն։ Էդ գեղի գերեզմանոց մե տապանաքար կա, էտի րնդամեն մի թիղ դլոխն ա կերեա, էդ ջոջ քար՝ ձնի մեջ։ Էդ ժամանակից ժողովուրդ կեթան ու կվերադառնան, ու կմնա անմարդարնակ մինչե մեր դաղթելր Ալաշկերաից։ Էդ քարի անունով էլ Ձոլաքար ա կոչվե դյուղը, մեծ, երկտր տապանաքար ա։